



**Գործադիր տնօրեն տեղակալ**

**Ծառայությունների զարգացման վարչության ղեկավար**

***Արեն Հովհաննիսյան, մագիստրոս***

Արեն Հովհաննիսյանը միացել է ՍԵՖ-ի թիմին 2009 թ.՝ զարգացնելու նպատակով կազմակերպության ռազմավարությունը նոր վարկեր և ֆինանսական ծառայություններ ստեղծելու միջոցով: Նա կատարելագործել և կանոնակարգել է բիզնես գործընթացները՝ ապահովելով դրանց արդյունավետ իրականացումը, մշակել է նոր վարկային ծառայություններ, իրականացրել վարկային գործընթացների ստանդարտացում:

Նախքան ՍԵՖ Ինտերնեյշնլին միանալը պրն. Հովհաննիսյանը աշխատել է Կասկադ Բանկում և Կասկադ Կրեդիտ ՈւՎԿ-ում, որտեղ կոորդինացրել է ներքին գործընթացները և մասնակցել վարկային ծառայությունների զարգացմանը՝ ձևավորելով տարբեր խնդիրներով զբաղվող գործառնական թիմ, կատարելագործելով գրավի կառավարման և մոնիթորինգի համակարգը, խթանելով վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման ծրագրի գործիքների զարգացումը և մշակելով նոր վարկային և ոչ վարկային ծառայություններ:

2003թ. պրն. Հովհաննիսյանը ստացել է բակալավրի աստիճան Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանում: Իսկ 2006 թ. նա ստացել է մագիստրոսի աստիճան Մոսկվայի Նոր Իրավաբանական Ինստիտուտում: